ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2024-2029

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՐ 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ…….3

1.Դպրոցի հիմնական նպատակն է բավարարել հետևյալ կարիքները……4

2.Հաստատության գործունեություն……..5

3.Տեղեկատվություն դպրոցի շենք շինության մասին……9

4.Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծությունը……..12

5.Համագործակցությունը տնօրենի , դպրոցի կառավարման մարմինների և խորհրդակցական մարմինների միջև……18

6.Մանկավարժական խորհրդի կազմ……20

7.ՏՀՏ և նորարարություններ……24

8.Աշակերտական կազմը և կրթության որակի վերլուծությունը……...26

9. Դպրոցում ներառական բազմակարծիք և մասնակցային արժեքային միջավայրերի վերլուծություն ……32

10. Աշխատակազմի արժևորման,խրախուսման և ինքնակրթության վերլուծությունը…34

11. Դպրոցի կրթական գործունեությունը իրականացվում է հետևյալ վարչական, մանկավարժական և ուսումնաօժանդակ հաստիքներով……..35

12. Դպրոցի կատարած ծախսերի վերլուծություն ……36

13.Նպատակների և խնդիրների սահմանում…….. 38

14. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշներ……49

15.ՈՒսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման

վերահսկողության մեխանիզմներ……53

ՎԵՐՋԱԲԱՆ……...55

Նախաբան

<<Կրթության մասին >> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած,հայրենասիրության,պետականության և մարդասիրական ոգով դաստիրակված անձի ձևավորումն է:

Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը ռազմավարական ծրագիր է, որի հիման վրա պլանավորվում է ուսումնական հաստատության աշխատանքը առաջիկա 5 տարիների համար:

Հաստատության 5 ամյա զարգացման ծրագիրը պետք է ուղղված լինի <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված նպատակների իրագործմանը, որը սահմանում է յուրաքանչյուր սովորողի.

1. Մտավոր,հոգևոր,ֆիզիկական և սոցիալական զարգացումը
2. Մարդկային արժանապատվության զարգացումը
3. Ինքնուրույն կյանքի նախապատրաստումն և ունակությունների ձերքբերումը
4. Մասնագիտական կողմնորոշումը
5. Ընտանեկան կյանքին պատրաստության ապահովումը
6. Ապագա քաղաքացու ձևավորումը

Կրթությունն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի կայուն զարգացող և բարեկեցիք երկրի և հասարակության ձևավորմանը:

Զարգացման ծրագիրը կազմելիս առաջնորդվել եմ ԿԳՄՍ նախարարի 22.09.2022թ. 35-Ն հրամանով հաստատված ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կազմման ձևաչափով,հաշվի առնելով սովորողների,ծնողների և մանկավարժական խորհրդի առաջարկություններ:

1.Դպրոցի հիմնական նպատակն է բարելավել հետևյալ կարիքները.

- ✓ Անհրաժեշտ է գիտելիքներով,հմտություններով և սեփական դիրքորոշմամբ օժտված քաղաքացիներ պատրաստել:
- ✓ Մարդասիրության և հայրենասիրության ոգով դաստիարակված քաղաքացիներ պատրաստել:
- ✓ Ապահովել սովորողների մտավոր,սոցիալական, ֆիզիկիական և հոգևոր զարգացումը:
- ✓ Սովորողների մեջ արմատավորել պետական մտածելակերպը,մարդկային որակները,կյանքի դժվարությունների և սեփական երկրի ճակատագրի պատասխանատվությունը:
- ✓ Բարոյահոգեբանական առողջ,հավասար և հարգալից կրթական միջավայրի ստեղծում:
- ✓ ՏՀՏ-ի դերի բարձրացումը և ներգրավումը կրթական համակարգում:
- ✓ Ծնողների ներգրավվածությունը և իրազեկվածությունը կրթության և դաստիարակության կազմակերպման գործընթացում:
- ✓ Սովորողների մեջ ձևավորվել ինքնուրույն կյանքին պատրաստ, շփվող և համագործակցնող,որոշումներ կայացնելու ունակ և սեփական կարծիքը արտահայտելուց չվախեցող քաղաքացիներ:
- ✓ Խորհուրդներ տալ և աջակցել մասնագիտական կողմնորոշման հարցում:
- ✓ Աշակերտներին շահագրգռել և հմտացնել նախագծային ուսուցման մեջ:
- ✓ Սովորեցնել և պահպանել սովորողների անվտանգությունը և սանիտարահիգենիկ նորմերը,կազմակերպել միջոցառումներ,մրցաշարեր առողջության և ֆիզիկական ակտիվության պահպանման համար:
- ✓ Նոր ՀՊՉ-ով պայմանավորված ապահովել յուրաքանչյուր սովորողի կրթությունը:
- ✓ Ապահովել աշակերտների մասնակցությունը մարզային և հանրապետական օլիմպիադաներին,ինչպես նաև մշակութային,ստեղծագործական և սպորտային միջոցառումներին:
- ✓ Աջակցել և խրախուսել մանկավարժներին մասնագիտական գիտելիքների ամրապնդման գործում:

2. Հաստատության գործունեությունը

ՀՀ լոռու մարզի Շիրակամուտի համար 1 միջնակարգ դպրոցը հանրակերթական միջնակարգ ծրագրեր իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:Այն իր գործողությունները իրականացնում է.

- Կրթության մասին օրենքով
- Հանրակրթության մասին օրենքով
- Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին օրենքով
- Աշխատանքային օրենսգրքով
- Դպրոցի կանոնադրությամբ
- Ներքին իրավական ակտերով

ՀՀ Լոռու մարզի,Սպիտակ համայքի Շիրակամուտի համար 1 միջնակարգ դպրոցը սկսել է գործել ամենայն հայոց Գևորգ 4-րդ կաթողիկասի կոնդակով 1879 թվականից:

Սկզբում դասերը անցկացվել են ծխականների բնակարաններում, այնուհետև 1884 թվականին կառուցվում է հատուկ շենք:18 տարի անց՝1902 թվականին կառուցվում է նոր ավելի ընդարձակ շինություն, իսկ 1905 թվականից այն ստանում է պետական դպրոցի կարգավիճակ:Հետաքրքիր է նշել, որ հայտնի առակագիր Աթաբեկ Խնկոյանը(Խնկո ապեր) 1905 թվականից եղել է դպրոցի տնօրենը մինչև 1908 թվականը երբ Հ. Թումանյանի միջնորդությամբ տեղափոխվել է Թբիլիսի:

1923-ից մինչև 1962 թվականը դպրոցը գտնվել է Անդրերկաթ գծի գերատեշչական ենթակայության տակ:1988 թվականի երկրաշարժի պատճառով ,որի էպիկենտրոնը Շիրակամուտն էր (Նալբանդ) դպրոցն ամբողջությամբ քանդվեց:1989-ից մինչև 2001 թվականը դպրոցը գործել է ժամանակավոր փայտե շինությունում:2001 թվականին կառուցվել է նոր դպրոց,որը ցավոք կառուցվել է շինարարական նորմերի կոպիտ խախտումներով և սեսմակայուն չէ:Այդ հանգամանքը հաշվի առնելով ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի համապատասխան որոշմամբ կառուցվելու է նոր դպրոց:

23.01.2003 թվականին դպրոցի կազմակերպաիրավական ձևը փոփոխվել է ՊՈԱԿ-

ի:Պետական ռեգիստրի համարն է 90.210.00364:ՀՎՀՀ 06802194:

Դպրոցի գործնուեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է:Նոր ներդրվող ՀՊՉ-ի պահանջները նպատակաուղղված են հասանելի ներառական և որակյալ կրթություն ապահովելու համար:Դրան հասնելու համար անհրաժետ է՝

1.Հարմարեցված միջավայր կրթական կարքիների համար:

2.Լաբորոտորյաներ ապահովված գույքով և համապատասխան նյութերով:

3.Մարզադահլիճ:

4.Համապատասխան գույքով,դիտակտիկ նյութերով առարկայական դասարաններ:

Տարական (լիցենզիաի համար 0904,սահմանային տեղ 48)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՏԱՐԱԿԱՆ հանրակրթական

(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0904

Սույնով վավերացվում է, որ

<<ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի հ. 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ, թիվ 9 փողոց , թիվ 5

(գտնվելու վայրը)

ՀՀ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ, թիվ 9 փողոց , թիվ 5

(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Տարրական հանրակրթական

(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ (ստորագրությունը) Ա. Աշոտյան (անունը, ազգանունը)

Կ.Տ.

«05» նոյեմբերի 2012 թ.

Անժամկետ

(լիցենզիայի գործողության ժամկետը)

Հիմնական (լիցենզիաի համար 0898,սահմանային տեղ 90)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՀԻՄՆԱԿԱՆ հանրակրթական

(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0898

Սույնով վավերացվում է, որ

<<ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի հ. 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ, թիվ 9 փողոց , թիվ 5

(գտնվելու վայրը)

ՀՀ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ, թիվ 9 փողոց , թիվ 5

(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Հիմնական հանրակրթական

(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ

(ստորագրությունը)

Ա. Աշոտյան

(անունը, ազգանունը)

U.S.P.

«*05*» *նոյեմբերի* *2012* թ.

Անժամկետ

(լիցենզիայի գործողության ժամկետը)

Միջնակարգ (լիցենզիաի համար 0726,սահմանային տեղ 54)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՄԻՋՆԱԿԱՐԳ հանրակրթական

(ծրագրի անվանումը)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՍԵՐԻԱ Ա № 0726

Սույնով վավերացվում է, որ

<<ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտի հ. 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

ՀՀ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ, թիվ 9 փողոց , թիվ 5

(գտնվելու վայրը)

ՀՀ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ, թիվ 9 փողոց , թիվ 5

(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

Միջնակարգ հանրակրթական

(ծրագրի անվանումը)

հանրակրթական ծրագիր

ՆԱԽԱՐԱՐ ..... *Ա. Աշոտյան*

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

«05» *նոյեմբերի* 2012 թ.

Անժամկետ

(լիցենզիայի գործողության ժամկետը)

3. Տեղեկատվություն դպրոցի շենք շինության մասին

1-հարկ	2-հարկ
Դասասենյակ 1- 36քմ	Դասասենյակ 1- 36քմ
Դասասենյակ 2- 36քմ	Դասասենյակ 2- 36քմ
Դասասենյակ 3- 36քմ	Դասասենյակ 3- 36քմ
Դասասենյակ 4- 36քմ	Դասասենյակ 4- 36քմ
Դասասենյակ 5- 36քմ	Դասասենյակ 5- 36քմ
Դասասենյակ 6- 36քմ	Գրադարան- 36քմ
Դասասենյակ 7- 22.2քմ	Արմատ լաբորատոիա- 22.2քմ
Ուսուցչանոց- 22.2քմ	Համակարգչային սենյակ- 10.7քմ
Ճաշարան- 70քմ	Զենքի սենյակ- 10.7քմ
Սանհանգույց 1- 4.9քմ	Աշխատասենյակ-36քմ
Սանհանգույց 2- 4.9քմ	Աշխատասենյակ- 10.7քմ
Միջանցք- 131.76քմ	Սանհանգույց 1- 13քմ
Պահեստ- 120քմ	Սանհանգույց 2- 14քմ
Մարզադահլիճ- 316.2քմ	Միջանցք- 108.6քմ
	Աշխատասենյակ- 10.7քմ

Տվյալներ դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը(շարքերով,շրջանաձև,Տ-աձև, Պ-աձև,խառը)	Սեղան-նստարանների քիթիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Դասասենյակ N1	36	շարքերով	5/10	2 մ.
Դասասենյակ N2	36	շարքերով	6/12	2 մ.
Դասասենյակ N3	36	շարքերով	2/4	3 մ.
Դասասենյակ N4	36	շարքերով	9/18	1 մ.
Դասասենյակ N5	36	շարքերով	5/10	2 մ.
Դասասենյակ N6	36	շարքերով	9/18	1 մ.
Դասասենյակ N7	36	շարքերով	5/10	2 մ.
Դասասենյակ N8	36	շարքերով	7/14	2 մ.
Դասասենյակ N9	36	շարքերով	4/8	3 մ.
Դասասենյակ N10	36	շարքերով	5/10	2 մ.
Դասասենյակ N11	24	շարքերով	7/14	2 մ.
Դասասենյակ N12	36	շարքերով	7/14	2 մ.

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1	Դպրոցը առանձնացված է ճանապարհային գոտուց, ցանկապատված է և անվտանգ սովորողների համար:	Դպրոցի բակը չունի ցերեկային լուսավորության ցանց:
2	Դպրոցը ունի վերանորոգված ճաշարան տարական դասարաններ համար:	Դպրոցը չունի հանդիսությունների սրահ և սպորտ դահլիճը կարիք ունի հիմնանորոգման:
3	Դպրոցը գազաֆիկացված է և ունի լոկալ ջեռուցման համակարգ:	Սպորտային հրապարակը հիմնանորոգման կարիք ունի:
4	Դպրոցում առկա է տարհանման պլան:	Դպրոցում առկա չէ նկուղ և ապաստարան:
5	Ապահովված է մշտական ջրով:	Բնագիտական առարկաների համար չկան լաբարատոր սենյակներ:

4.Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծությունը

Դպրոցի նյութատեխնիկական միջոցները թույլ են տալիս ապահովել դասապրոցեսի անցկացումը: Դասասենյակներում կա համապատասխան դասասեղաններ և աշակերտական աթոռներ:Սակայն գույքը ֆիզիկապես արդեն մաշվել է և անհրաժեշտ է ձեռք բերել նոր գույք:

<<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագրի շրջանակում ճաշարանի վերենորոգվել է փոխվել են պատուհանները, սալիկապատվել է հատակը, համալրվել է կենցաղային նոր գույքով՝ սառնարոնով, գազոջախով, ջրատաքացուցիչով և այլ պարագաներով: Ճաշարանի վերանորոգումից հետո դպրոցի միջոցների հաշվին համալրվել է նոր սեղաններով և աթոռներով:

Դպրոցում առկա է 14 համակարգիչ, սակայն աշխատում է երկուսը, ունի մեկ պռոյեկտոր, երկու տպիչ: Վերջերս դպրոցի խնայողությունների հաշվին ձեռք է բերվել նոր սերնդի համակարգիչ և տպիչ: Սակայն դա չի բավականացնում դպրոցում որակյալ կրթական ծրագիր մատուցման:

Տվյալներ հաստատության գրադարանի և դրա գործունեության մասին

Ցուցանիշ	Տվյալներ
Գրադարանի տարածքը ք.մ-ով	36
Գրադարանում համակարգիչների թիվը	1
Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը	1
Գրադարարանում կամ ընթերցասրահում նստատեղերի թիվը	12
Գրադարանային ֆոնդում առկա գրքերի (բացառությամբ ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերի) ընդհանուր թիվը, այդ թվում	443
-գեղարվեստական գրքերի թիվը	267
-տեղեկատվական գրքերի թիվը (բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն)	16
-ուսումնամեթոդական գրքերի թիվը	110
-ամսագերի թիվը	50

-այլ	
Վերջին անգամ գրադարանային ֆոնդի նոր գրականությամբ համալրվելու տարեթիվը	**2021**
Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը	**19-25**
Պատասխանել այո կամ ոչ	
Վերանորոգվա՞ծ է արդյոք գրադարանը	Ոչ
Անցկացվո՞ւմ են գրադարանում դասեր և ուսումնական պարապմունքներ	Ոչ
Գրադարանավարն ունի՞ համապատասխան բարձրագույն կրթություն	Ոչ
Վերջին 3 տարվա ընթացքում գրադարանվարն անցե՞լ է վերապատրաստում գրադարանային աշխատանքի ուղղությամբ	Ոչ
Գրադարանը հանդիսանու՞մ է հանրապետության, այլ երկրների կամ կազմակերպությունների գրադարանների բաժանորդ և օգտվում է արդյոք նրանց ռեսուսներից	Ոչ
Գրադարանն ունի՞ էլեկտրոնային ռեսուսներ, որքան	Այո, 5
Սովորողները կարո՞ղ են ինքնուրույն ու ազատ մոտենալ գրադարանի գրադարակներին և պահարաններին, ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և վերցնել այն ընթերցասրահում աշխատելու ժամանակ	Այո
Գրադարանն ունի՞ գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագիր	Այո
Գրադանավարը կարողանո՞ւմ է օգտվել գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագրից	Այո

<u>Գրադարանի գործունեության բարելավման ուղղությամբ պետք է շատացնել տեղեկատվական, գեղարվեստական գրքերի թիվը և պետք է ստեղծել ընթերցասրահ, ստեղծել էլեկտրոնային պաշարներ: Գրադարանավարության ծրագիր պետք է մտցնել գարադարանավարության համակարգչային ծրագրի մեջ:</u>

Առաջնահերթ խնդիր եմ համարում նյութատեխնիկական բազայի համալրումը և

թարմացումը, ինչը կօգնի ավելի արդյունավետ կրթություն ապահովելը:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1. Դպրոցը ապահոված է ինտերնետ կապով:	Բոլոր դասարաններում բացակայում է ինտերնետ կապը, որը խոչընդոտում է նոր ՀՊՉ-ով դասապռոցեսներ կազմակերպելու համար:
2.Արմատ ինժերենական լաբորատորյան հագեցված է համապատասխան պարագանորով և դիտակտիվ նյութերով:	Դպրոցում բացակայում են լաբորատոր սարքավորումները:
3.Գրադարանային գրքերը հասանելի են աշակերտններին:	Գրադարանային ֆոնդը պետք է թարմացնել, գրքերի զգալի մասը ոչ ծրագրային են:
	Սանհանգույցները և լվացարանները ենթակա են փոփոխման:
	Աշակերտական սեղան աթոռները ֆիզիկապես մաշված են և անհրաժեշտ են փոխարինման:

Զարգացման ծրագրի ընթացքում նախատեսում եմ արդիականացնել նյութատեխնիկական բազան, ձեռք բերել նոր գույք, համալրել նորագույն սարքավորումներով,որը կնպաստի արդյունավետ կրթություն կազմակերպելու, կօժանդակի առաջադիմությանն և կրթության որակի բարելավմանը:

5.Համագործակցությունը տնօրենի, դպրոցի կառավարման մարմինների և խորհրդակցական մարմինների միջև



Դպրոցի կառավարման մարմիններն են՝ կառավարությունը, պետական կառավարման լիազոր մարմինը, մարզպետարանը, կառավարման խորհուրդը և դպրոցի տնօրենը և վարչատնտեսական համակարգողը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 25.03.2021 թվականի համար 25-Ն հրամանի դպրոցում ձևավորվել և գործում է միացյալ խորհուրդը:Այն ընդգրկում է Շիրակամուտի համար 1 միջնակարգ և Շիրակամուտի հիմնական դպրոցները: Խորհուրդը բաղկացած է14 անդամներից որի կազմի վերաբերյալ ներկայացնում եմ տեղեկատվություն:

Հ/Հ	Անուն, ազգանուն	Պաշտոն	Կրթություն
1	Սեդա Մելքոնյան	նախագահ	բարձրագույն կրթություն
2	Ֆլորա Կարապետյան	քարտուղար	միջին մասնագիտական
3	Մայա Երանոսյան	անդամ	բարձրագույն կրթություն
4	Քրիստինե Պետրոսյան	անդամ	միջնակարգ կրթություն
5	Կարինե Պետրոսյան	անդամ	միջին մասնագիտական
6	Սիրանուշ Արշակունի	անդամ	բարձրագույն կրթություն
7	Լուիզա Չարչյան	անդամ	միջնակարգ կրթություն
8	Սվետլանա Գալոյան	անդամ	միջնակարգ կրթություն
9	Հռիփսիմե Սարգսյան	անդամ	միջին մասնագիտական
10	Հենրիկ Իգիթխանյան	անդամ	բարձրագույն կրթություն
11	Համլետ Մազմանյան	անդամ	բարձրագույն կրթություն
12	Արուսյակ Լամբարյան	անդամ	բարձրագույն
13	Արտյոմ Օհանյան	անդամ	միջին մասն.
14	Եղիշ Ավագյան	անդամ	միջին մասն.

Կառավարման խորհրդի նիստերը տեղի են ունենում սահմանված ժամկետներում: 2023-2024 ուս. տարում տեղի է ունեցել կառավարման խորհրդի 5 նիստ, որտեղ քննարկվել է կիսամյակային և տարեկան ուսումնադաստիրակչական աշխատանքների հաշվետվությունները, հավանություն է տրվել տարեֆիկացյոն ցուցակներին, տարեկան ծախսերի նախահաշիվներին, ֆինանսական հայտերին և բյուջեի քննարկմանը, քննարկվել է կիսամյակային և տարեկան բյուջեների կատարողականների հաշվետվությունը:

Հ/Հ	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1	Կառավարման խորհրդի նիստերը տեղի է ունենում սահմանված ժամկետներում	Խորհրդի անդամներից ոչ բոլորը գիտեն իրենց իրավունքները և պարտականությունները
2	Բոլոր հանձնարարությունների կատարումը տնօրենի կողմից օրենքով սահմանված կարգով	Խորհրդի ոչ բոլոր անդամներն են պատշաճ կերպով ներկայանում խորհրդի նիստերին
3	Ընդունված բոլոր իրավական ակտերի, արձանագրությունների մասին տեղյակ է պահվում շահագրգիռ կողմերին	Համագործակցությունը բացակայում է խորհրդի անդամների միջև կարևոր հարցերի քննարկման ժամանակ
4	Կառավարման խորհրդի նիստերին տնօրենի մասնակցությունը խորհրդակցական ձայնի իրավունքով	
5	Արդյունավետ համագործակցություն պետական կառավարման շահագրգիռ կազմակերպությունների հետ	

5.Համագործակցություն կրթության կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպություններ և խորհրդակցական մարմինների հետ:

Դպրոցի կառավարման մարմիններն են՝

1.Հիմնադիրը՝ ի դեմս ՀՀ կառավարության:

2.Կրթության պետական կառավարման լիազոր մարմինը:

3.Լիազոր մարմինը՝ մարզպետարանը:

4.Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը:

5.Գործադիր մարմինը՝ տնօրենը:

Շիրակամուտի համար 1 միջնակարգ դպրոցը համագործակցում է Սպիտակ խոշորացված համայքի աշխատակազմի, Շիրակամուտի վարչական ղեկավարի աշխատակազմի, ոստիկանության անչափահասների բաժանմունքի և այլ շահագրգիռ կողմերի հետ: Դրա արդյունքը այն է, որ մեր համայքում պարտուսից դուրս մնացած աշակերտներ չկան:Համագործակցում ենք ծնողական խորհրդի հետ:Ծնողական խորհուրդը, որպես խորհրդակցական մարմին աշխատանք է տանում դպրոց-ծնող կապը ամրապնդելու համար:Օրենքով սահմանված կարգով նիստեր է անում և աշխատում է ցածր առաջադիմություն և վատ վարք ունեցող դպրոցական աշակերտներ ունեցող ծնողների հետ:Ծնողական խորհուրդը որոշակի ներդրում ունի նաև դպրոցական սնունդ ծրագրում:
Դպրոցը պատշաճ կերպով համագործակցում է կրթության ոլորտի բոլոր կառույցների՝ ԿԳՄՍ-ի,ԿԶՆԱԿԻ-ի,ԿՏԱԿ-ի,Լոռու մարզպետի աշխատակազմի,կրթության,մշակույթի և սպորտի վարչության հետ:
Դպրոցը ակտիվ համագործակցում է նաև Սպիտակի մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ քանի,որ դպրոցում սովորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 4 աշակերտներ:Կենտրոնի աշխատակիցները ամեն շաբաթ այցելում են դպրոց:Ըստ ժամանակացույցի ամեն տարի դպրոց են այցելում ՊՆ-ի մեր դպրոցին կցված

զորամասի աշխատակիցներ: Զրույց-քննարկում է տեղի ունենում աշակերտների հետ ռազմահայրենասիրական թեմաներով աշակերտները ծանոթանում են ռազմական ինստիտում ընդունման կարգին և պայմաններին:

Ուժեղ կողմեր		Թույլ կողմեր
1	Շիրակամուտի համար 1 միջնակարգ դպրոցում չկա ուսումը կիսատ թողած և պարտուսից դուրս մնացած աշակերտներ:	Մշակութային միջոցառումներ համայքում չեն կազմակերպվում:
2	Սոցիալապես անապահով ընտանիքի երեխաներին գրքերի վարձավճարների դիմաց վճարները մասնակի կամ ամբողջական փոխհատուցվում են:	Բարեգործական կազմակերպությունների հետ չկա համագործակցություն:
3	Դպրոցը ղեկավարվում է հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի կողմից ընդունված իրավական ակտերով:	Ոչ բոլոր ծնողներնն են համագործակցում դպրոցի հետ:
4	Համագործակցություն ՊՆ-ի և այլ շահագրգիռ կառույցների հետ:	Կապված նոր չափորոշիչի հետ քիչ է համագործակցությունը ԿԶՆԱԿ-ի հետ
5	Դպրոցը կատարում է լիզոր մարմնի՝Լոռու մարզպետարանի օրենքին չհակասող հանձնարականները,մասնակցում մարզային կրթական իրադարձություններին	
6	ՀՀ կրթության տեսչական մարմնի ուսումնասիրությունը և վերջնական եզրակացությունը նպաստում է թերություններ շտկմանը:	
7	Քննությունների կազմման համար ակվիտ համագործակցություն ԳԹԿ-ի հետ:	

6.Մանկավարժական խորհրդի կազմը

Մանկավարժական խորհրդի նիստերը տեղի է ունենում 2 ամիսը մեկ: Սակայն ըստ անհրաժեշտության կարևոր և հրատապ հարցերը քննարկվում է արտահերթ նիստերի միջոցով: Մանկավարժական խորհրդի նիստերին քննարկվում է հաստատության աշխատանքային ռեժիմը,ուսուցման որակի և այլ կարևոր հարցեր:Կարևորվում է մանկավարժական խորհրդի անդամների ակվիտ մասնակցությունը քննարկվող հարցերին,մանկավարժական խորհրդի անդամները հանդես են գալիս կարծիքներով և առաաջարկություններով: Կապված նոր չափորոշիչի հետ և արդի մարտահրավերների հետ շատ կարևոր է մանկավարժական ուսուցչական աշխատողների դերը արդյունավետ և որակյալ ուսուցում կազամակերպելու համար: Շիրակամուտի համար 1 միջնակարգ դպրոցը համալրված է իրենց գործին գիտաք,համապատսխան մասնագիտական գիտելիքներ ունեցող կադրերով: Ուսուցչական ողջ անձնակազմը ունի բարձրագույն կրթություն:Ունենք կամավոր ատեստավորված ուսուցիչ:

Ստորև ներկայացնում եմ մանկավարժական համակազը և վերլուծենք ուժեղ և թույլ կողմերը:

ՀՀ	Անուն ազգանուն	Ծննդյան տարեթիվ	Մանկավարժական ստաժ	Կրթություն	Առարկա
1	Աշոտ Կյուրեղյան	1970	21	Բարձրագույն	Պատմություն
2	Մնացական Պալյան	1971	27	Բարձրագույն	Շախմատ
3	Մայա Երանոսյան	1968	30	Բարձրագույն	Հայոց լեզու և գրականություն
4	Հասմիկ Հովակիմյան	1986	16	Բարձրագույն	Կենսաբանություն
5	Արդավազդ Սարգսյան	1959	4	Բարձրագույն	Ֆիզկուլտուրա
6	Քրիստինե Սիմոնյան	1978	15	Բարձրագույն	Անգլերեն
7	Հրաչ Նալբանդյան	1975	20	Բարձրագույն	Պատմություն
8	Մարգարիտա Հարությունյան	1960	39	Բարձրագույն	Մաթեմատիկա
9	Էտիբարյան Գոռ	1991	10	Բարձրագույն	ՆԶՊ
10	Կարեն Գևորգյան	1979	16	Բարձրագույն	Ռուսերեն
11	Անուշ Գասպարյան	1969	30	Բարձրագույն	Հայոց լեզու և գրականություն
12	Հերմինե Կյուրեղյան	1970	28	Բարձրագույն	Քիմիա

13	Հասմիկ Աղ. Մազմանյան	1960	29	Բարձրագույն	Մաթեմատիկա և ինֆորմատիկա
14	Ռուզաննա Համբարյան	1962	43	Բարձրագույն	Դասվար
15	Օվսաննա Իվանյան	1960	39	Բարձրագույն	Դասվար
16	Սեդա Մելքոնյան	1983	11	Բարձրագույն	Դասվար
17	Նելլի Պապոյան	1995	5	Բարձրագույն	Դասվար
18	Հասմիկ Սլ. Մազմանյան	1981	11	Բարձրագույն	Աշխարհագրություն
19	Անահիտ Առուտամյան	1968	30	Բարձրագույն	Ֆիզիկա
20	Բելլա Նասլյան	1988	6	Բարձրագույն	Ուսուցչի օգնական
21	Ժաննա Խ.	1982	9	Բարձրագույն	Դակ

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1	Ուսուցիչների կողմից իրականացվում է փողադարձ դասալսումներ:	Կամավոր ատեստավորման տոկոսը ցածր է:
2	Բոլոր ուսուցիչները ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:	ՏՀՏ-ի ոլորտում ուսուցիչները կարիք ունեն վերապատրաստման:
3	Բոլոր ուսուցիչները տարբեր ժամկետներում մասնակցել են մասնագիտական վերապատրաստումներին:	Դպրոցում տարակարգ ունեցող ուսուցիչներ չկան:
4	Թեմատիկ պլանները կազմվում են ժամանակին և տեղադրվում են էլեկտրոնային մատյում:	
5	Մեթոդ միավորման նիստերը տեղի են ունենում ժամանակին, ուսուցիչներին ցուցաբերվում է մասնագիտական օգնություն:	Ուսուցչի թափուր հաստիք առաջանելու դեպքում դժվար է լինում նոր մասնագետներով համալրելը: Ուսուցիչների 30% գալիս են դրսից:
6	Բոլոր ուսուցիչները դասարան են մտնում օրվա պլանով:	

7.ՏՀՏ և նորարարություններ

Ուսուցման որակը բարձրացնելու համար շատ կարևոր և պահի հրամայական է նոր կրթական տեխնոլոգիաների և նորարարությունների կիրառումը:
Շիրակամուտի համար 1 միջնակարգ դպրոցի մանկավարժները մեծ մասը ունեն համապատասխան գիտելիքներ ՏՀՏ-ից և նորարարություններից օգտվելու համար: Նրանք իրենց գիտելիքները օգտագործում են թեմատիկ պլաններ կազմման, էլեկտրոնային մատյանների վարման մեջ: Այդ բոլոր գործողությունները կատարում են ժամանակին և պատշաճ:Ուսցիչները իրազեկվում են << Հայկական կրթական միջավայր>>,<< Պաշարների շտեմարան>> կայքերի մասին:Սակայն ավելի մատչելի և որակյալ կրթություն ապահովելու համար կարևոր է թարմացնել նյութատեխնիկական բազան, ինչպես նաև կարևոր է նոր սերնդի համակարգիչների ձեռքբերումը:
<<Արմաթ>> ինժեներական լաբորատորյաի ներդրումը հանրակրթական դպրոցներում կարևոր խթան հանդիսացավ աշակերտների մոտ մասնագիտական կողմնորոշման հարցում:Մեր դպրոցի աշակերտները մեծ ոգևորությամբ մասնակցում են <<Արմաթ >>-ի դասերին, ինչպես նաև մասնակցում են մի շարք մրցաշարերի:
Ստորև ներկայացնում եմ ՏՀՏ-ի ուժեղ և թույլ կողմերը.

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1	Առցանց հարթակում հետազոտական նյութերի, տարբեր ուսումնական նյութերի ուսումնասիրություն:	Ոչ բոլոր ուսուցիչները ունեն ՏՀՏ-ի համապատասխան բարձր գիտելիքներ:
2	Բոլոր ուսուցիչները պարտադիր և ժամանակին լրացնում են էլեկտրոնային մատյանը:	Տարիքով ավելի մեծ ուսուցիչների մոտ ցածր տոկոս է կազմում ՏՀՏ-ի կիրառումը:
3	ՏՀՏ-ի ոլորտում ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ և օգնում իրար:	Համակարգչային սարքավորումների հնացած լինելը խոչընդոտում է արյդունավետ աշխատանքին:
4	Կազմակորպվում են տեսադասեր և առցանց հանդիպումենի:	Ծնողները հիմնականում չեն հետևում էլեկտրոնային օրագրին:
5	Դպրոցն ունի ինտերնետ կապ:	Ինտերնետ կապը շատ հաճախ խափանվում և աշտախում է ընդհատումներով:
6	Դպրոցի պաշտոնական կայքում հրապարակվում է դպրոցի գործնուեության մասին:	Համակարգիչները կարիք ունեն պաշտպանվելու հակերային հարձակումներից:
7	Հաշվապահական հաշվառման ամբողջ գործունեությունը կատարվում է էլեկտրոնային եղանակով և ժամանակին:	Հաճախակի պետք է կազմակերպել ՏՀՏ ոլորտին նվիրված դասընթացներ:
8	Դպրոցն ունի պաշտոնական կայք,ունի Facebook սոցիարթակում ամենօրյա ռեժիմով թարմացվող կայքէջ և գործում են անխափան:	

8. Աշակերտական համակազմը և կրթության որակի վերլուծությունը

Շիրակամուտի համար 1 միջնակարգ դպրոցում կրթության որակը գնալով բարձրանում է: Դրա վառ ապացույցը 2023 թվականին ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից 6 և 9 դասարաններում հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից տրված գրավոր աշխատանքներն էին որում մեր աշակերտները ցուցաբերեցին փայլուն արդյունքներ:Բոլոր հաջողությունները կապված են մշտադիտական վերահսկողության,պլանավորված գործողությունների և թիմային աշխատանքի հետ:Արդեն մի քանի տարի է մեր աշակերտները մարզային և հանրապետական օլիմպիադաներում ցուցաբերում են փայլուն առաջադիմություն.

2020 թվականի հանրապետական օլիմպիադայի հայոց եկեղեցու պատմություն առարկայի 8-րդ դասարանի աշակերտը գրավել է առաջին տեղ:

2021 թվականի հանրապետական օլիմպիադայի հայոց եկեղեցու պատմություն առարկայի 9-րդ դասարանի աշակերտը գրավել է առաջին տեղ:

2022 թվականի հանրապետական օլիմպիադայի հայոց եկեղեցու պատմություն առարկայի 8-րդ դասարանի աշակերտը գրավել է առաջին տեղ իսկ 10-րդ դասարանի աշակերտը 2 տեղ:

2021-2022 ուս. տարում աշխարհագրություն առարկայի հանրապետական փուլում 10 դասարանի աշակերտը պարգևատրվել է գովասանագրով:

2022 թվականի մաթեմատիկա առարկայի օլիմպիադային 10-րդ դասարանի աշակերտը պարգևատրվել է գովասանագրով:

Ակնհայտ է դառնում որ տարեց-տարի ավելանում են օլիմպիադային մասնակցող աշակերտների քանակը և մեր քրտնաջան աշխատանքը տալիս է մեր սպասված արդյունքերը:

Դպրոցի աշակերտական խորհուրդը գործում է շատ ակտիվ:Սահմանված

ժամկետում գումարում է նիտեր,գրառում է աշակերտական խորհրդի նիստերի

արձանագրությունների մատյանը:Կազմակերպում է միջոցառումներ,օգնում է

թույլ սովորող աշակերտներին, հանդիպում է կազմակերպում աշակերտների հետ

և նրանց հուզող հարցերը ներկայացնում է տնօրինությանը:

Աշակերտների առաջադիմության վառ ապացույց է նախորդ ուստարում սովորողների գրանցած արդյունքները:

Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ նախորդ ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը			Հիմնական առարկաներից տարեկան գնահատականնե րիմիջինը			4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը		
	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ. դաս.	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ. դաս.	4-րդ. դաս.	9-րդ. դաս.	12-րդ. դաս.
Հայոցլեզու	4	13	14	7.5	8.2	7,7	7	16.2	
Մաթեմատիկա	4	13		7	-	-	6.5	15.8	17
Հանրահաշիվ	-	-		-	6.9	7	-	-	-
Երկրաչափություն	-	-	14	-	6.9	7	-	-	-
Հ. գրականություն	-	13	14	-	8.2	7,8	-	7.8	-
Ռուսաց լեզու	-	13	14	-	7.3	7.1	-		-
Անգլերեն	-	13	14	7	7.9	7	-	7.7	-
Կերպարվեստ	-	-	-	9	-	-	-	-	-
Երգ-երաժշտություն	-	-	-	9	-	-	-	-	-
Ես և շրջ. աշխարհը	-	-	-	6.75	-	-	-	-	-
Տեխնոլոգիա	-	-	-	9	-	-	-	-	-
Ֆիզկուլտուրա	-	13	14	9	7.6	8.2	-	8	-
Շախմատ	-	-	-	7,5	-	-	-	-	-
Հ. աշխարհագրությ.	-	13	14	-	7.7	7,1	-		-
Հ. պատմություն		13	14	-	7.3	7,1	-	7.3	17.5

Համաշխ. պատմութ.	-	13	14	-	7.3	7,2	-	-	-
Հ. եկ. պատմություն	-	13	-	-	7.8	-	-	-	-
Ինֆորմատիկա	-	13	14	-	7.5	7.2	-	-	-
Կենսաբանություն	-	13	14	-	7.7	7.4	-	-	-
Քիմիա	-	13	14	-	8	7.3	-	-	-
Ֆիզիկա	-	13	14	-	7.6	7.5	-	13.3	-
Հասարակագիտությ.	-	13	14	-	8	7.2	-	-	-
Ն.Զ.Պ	-	13	14	-	9	9	-	-	-
Հ. լեզու և գրակ.	-	-		-	-	-	-	16.2	18
Ձեռնարկատիրութ.	-	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	4	13	14	7.2	7.7	7,4	11,1	11.53	17.5

2023-2024 ուս. տարում Շիրակամուտի համար 1 միջնակարգ դպրոցը կոմպլեկտավորվել է հետևյալ դասարաններով և աշակերտներով:

1.դասարան- 10 աշակերտ

2. դասարան- 11 աշակերտ

3. դասարան- 10 աշակերտ

4. դասարան- 8 աշակերտ

5. դասարան- 4 աշակերտ

6. դասարան- 17 աշակերտ

7. դասարան- 9 աշակերտ

8. դասարան-13 աշակերտ

9. դասարան- 10 աշակերտ

10. դասարան- 13 աշակերտ

11. դասարան- 6 աշակերտ

12. դասարան- 8 աշակերտ

Ընդհամենը՝ 119 աշակերտ:

Գնալով բարձրանում է դպրոցի առաջադիմությունը դրա վառ ապացույցը

մարզային և հանրապետական օլիմպիադաներում մեր աշակերտների

մասնակցությունն է և փայլուն արդյունք ցուցաբերելը:

Մեր աշակերտների արդյունավետության վառ ապացույց է նաև 4-րդ դասարանի գիտելիքների ստուգման, 9-րդ դասարանի ավարտական և 12-րդ դասարանի պետական ավարտական քննություններում մեր աճի դինամիկան:

Տվյալներ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետականավարտական քննությունների արդյունքների փոփոխության դինամիկայի վերաբերյալ

Քննական առարկաներ	Քննությունների միջին միավորների փոփոխությունը նախորդ ուսումնական տարվա նկատմամբ՝ ըստ կրթական աստիճանների					
	Քննությունների միջին միավորների աճի տոկոսը			Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը		
	4-րդ. դաս.	9-րդ.դաս.	12-րդ.դաս.	4-րդ. դաս.	9-րդ.դաս.	12-րդ.դաս.
Հայոց լեզու		0.36	-	0.35	-	-
Մաթեմատիկա	-	1	2.5	0,50	-	-
Հայոցլ. և գրակ.	-		3.7	-	0.26	-
Հ. պատմություն	-	-	3.8	-	0,50	-
Ֆիզկուլտուրա	-	1	-	-	-	-
Ռուսաց լեզու	-		-	-	-	-
Անգլերեն	-	-	-	-	0.01	-
Ֆիզիկա	-		-	-	0.2	-
Կենսաբանություն	-	-	-	-	-	-
Գրականություն	-	-	-		-	
Ընդամենը		2.36	10	0,85	0,97	

Ներկայացնում եմ վերջին 5 տարիների միջնակարգ կրթությունը ավարտած և ԲՈՒՀ-էր ընդունված աշակերտների տվյալները:

Ուսումնական տարի	Ավարտած	ԲՈՒՀ ընդունված
2018-2019	Միջնակարգ դպրոցն ավարտել է 7 աշատերտ	3 աշակերտ ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն
2019-2020	Միջնակարգ դպրոցն ավարտել է 10 աշակերտ	5 աշակերտ ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն
2020-2021	Միջնակարգ դպրոցն ավարտել է 14 աշակերտ	9 աշակերտ ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն
2021-2022	Միջնակարգ դպրոցն ավարտել է 13 աշակերտ	6 աշակերտ ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն
2022-2023	Միջնակարգ դպրոցն ավարտել է 14 աշակերտ	7 աշակերտ ընդունվել է բարձրագույն ուսումնական հաստատություն

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1	Տնօինության կողմից հաճախակի են տրվում գրավոր աշխատանքներ:	Բացակայում է համագործակցությունը հարևան դպրոցների աշակերտների հետ:
2	Դասալսումները կատարվում են ժամանակին և պատշաճ:	Չեն կազմակերպվում մասնագիտական կողմնորոշմանը նվիրված դասեր:
3	Ուսուցիչը դասի է մտնում նոր ՀՊՉ-ին համապատասխան դասի պլանով:	
4	Նոր չափորոշիչին համապատասխան մշակվում է ուսումնական պլանները:	
5	Մասնակցությունը մարզային և հանրապետական օլիմպիադաներին:Արդեն 4 տարի է անընդմեջ ունենք հանրապետական օլիմպիադայի առաջին տեղ զբաղեցրած և գովասանագրերով պարգևատրված աշակերտներ:	
6	Ռազմահայրենասիրական խաղերի տարածքային փուլում գրավել են 2 տեղ,իսկ մարզայինումի 3 տեղ:	

9.Դպրոցում ներառական բազմակարծիք և մասնակցային արժեքային միջավայրերի վերլուծություն

